ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՐՏԱՎՃԱՐ

Սկիզբը՝ թիվ Դ., է.։

ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԿ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ՝ ՀՈՐԻՑ ԲԽՄԱՆ [ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ] ԴԵՄ ՀԱԿԱՌԱԿՎՈՂՆԵՐԻՆ

Արդ, իմ խոսքն ուղղելով ձեզ, իմ սիրելի ա՛զգ Հայոց, ձեզ հետ եմ խոսում։ Այս քաղկեդոնականները հիմնականում երկու [ուղղության] են պատկանում՝ լատինադավաններ եւ հունադավաններ։ Եւ այս երկուսը միայն այն հարցում են միաբանվում, որ երկուսն էլ քաղկեդոնական են, իսկ մեզ պախարակում եւ հերձված են համարում՝ ասելով, թե «դուք՝ հայերդ, Քաղկեդոնի ժողովը չեք ընդունում եւ Քրիստոսի համար «երկու բնություն» չեք ասում»։ Այդժամ դուք էլ ձեզ հակառակվողին վստահությամբ եւ համարձակապես պատասխան տվեք՝ ասելով, թե «սկզբից եւեթ մենք չենք ընդունել ու հատկապես հրաժարվել ենք այդ ժողովից, քանի որ այն առաջին սուրբ ժողովներին դեմ խոսեց, ինչպես որ ցույց տվեցինք վերեւում։ Մեր՝ այդ ժողովը չընդունելու երկրորդ պատճառն այն էր, որ այդ ատելի ժողովը ոչ միայն մյուս բոլոր ազգերը չընդունեցին ու մերժեցին, այլ նաեւ դուք իսկ՝ ընդունողներդ էլ հերքեցիք եւ մերժեցիք։ Արդ, դուք, որ այդ ժողովը սահմանողներն ու ընդունողներն էիք, սակայն հերքեցիք եւ ուրացաք, մեզ ինչպե՞ս եք ստիպում ընդունել այն»։

Եթե լատինադավանների հետ խոսես, ասա՛, որ «ձեր այդ սիրելի ժողովն ինչ էլ որ սահմանեց, ամեն բան սուտ էր եւ ճշմարտությանը հակառակ։ Սակայն [այդ ժողովը] գեթ մեկ հարցի շուրջ պատահմամբ ճշմարիտը խոսեց՝ Սուրբ Հոգին միայն «Հորից բխած» կոչելով, համաձայն առաջին սուրբ հայրերի [դավանության], ուրեմն դուք ինչո՞ւ ընդունեցիք եւ ամուր պահեցիք բոլոր սուտ կանոնները, իսկ այդ միակ ճշմարիտ կանոնը մերժեցիք եւ հետագայում ընդդեմ դրա սահմանադրեցիք,

թե [Սուրբ Հոգին] բխում է Հորից եւ Որդուց։ Ումից ուսանեցիք եւ որտեղից իմացաք դա»։

Ահավասիկ, Քրիստոս քանիցս խոսում է այդ մասին եւ [Սուրբ Հոգին] միայն «Հորից բխած» է կոչում եւ ո՛չ թե Իրենից։ Ինչպես որ ասում է՝ «Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից» (Հովհ. ԺԷ. 26)։ Եւ թե՝ «Պիտի աղաչեմ Հորը, եւ Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ» (Հովհ. ԺԴ. 16)։ Դարձյալ՝ «Մինչեւ Ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա» (հմմտ. Հովհ. ԺԶ. 7)։ Նաեւ՝ «Ահա Ես ուղարկում եմ ձեզ Իմ Հոր խոստումը» (Ղուկ. ԻԴ. 49)։ Իսկ Պետրոս առաքյալն էլ «Գործք առաքելոց»-ում ասում է. «Սուրբ Հոգու խոստումն ընդունելով Հորից՝ սփռեց մեզ վրա» (հմմտ. Գործք. Բ. 33)։ Եւ Քրիստոս Եսայու շուրթերով ասում է. «Տերը, Տերն առաքեց Ինձ, ու Նրա Հոգին» (Ես. ԽՀ. 16)։ Այս մտքով էին ընթանում սուրբ առաքյալներն ու առաջին սուրբ հայրերը։ Եւ Կոստանդնուպոլսի սուրբ ժողովը Մակեդոնին դատապարտելիս հայտնապես հաստատեց ու վճռեց՝ ասելով. «Հավատում ենք նաեւ Սուրբ Հոգուն՝ Տիրոջը եւ Կենդանարարին, որը բխում է Հորից ու երկրպագվում է Հոր եւ Որդու հետ»։ Եւ ձեր սիրելի ժողովը եւս նույնը սահմանեց։ Դուք ինչո՞ւ այդպես բացահայտորեն մարտնչեցիք այսքան ճշմարտությունների դեմ եւ հակառակը կանոնեցիք։ Որտեղից սովորեցիք եւ իմացաք, ցո՛ւյց տվեք մեզ։ Եւ կամ թե՝ ինչպե՞ս եք Սուրբ Հոգու մասին ասում, որ «բխում է Հորից եւ Որդուց». եթե ըստ ձեր համոզման՝ «կիսով չափ» Հորից է բխում ու «կիսով չափ»՝ Որդուց, ապա ուրեմն դուք Հորը դավանում եք որպես տկար մեկին, որ կարոտ է Որդու օգնությանը, իսկ Հոգու պարզ էությունն էլ բաղադրյալ եք «դարձնում», ինչն անհանդուրժելի մի հերձված է։ Կամ էլ այդ ինչպե՞ս է, որ Հայրը «միայնակ» կարող է Որդուն ծնել, սակայն չի կարող Հոգուն «միայնակ» բխել։ Իսկ ահա եթե Հայրը եւ Որդին ըստ կատարելության բխեցրին, ու ո՛չ թե «կիսով չափ», ապա դրանից հետեւում է, որ պետք է երկու «Հոգի» լինի եւ ո՛չ թե մեկ, իսկ այդպիսով էլ Սուրբ Երրորդությունը «դարձնում» եք չորրորդություն, որն ամենավերջին ամբարշտությունն է։ Էլ ի՞նչ կարիք կա երկարաբանելու այս հարցի շուրջ, քանի որ, հայտնապես եւ անտարակույս, [ձեր դավանածը] մի մեծ հերձված է՝ հակընդդեմ ճշմարտությանն ու հակառակ բոլոր սուրբ հայրերի [վարդապետությանը]։

Եւ թեպետ [քաղկեդոնականները] ջանում են այստեղից եւ այնտեղից վերցված, Սուրբ Գրքի ու սուրբ հայրերից ոմանց այս կամ այն խոսքերի ճշմարիտ նշանակությունն այլափոխել եւ իրական միտքն աղա-

վաղել՝ մեկնաբանելով ըստ իրենց տեսակետի ու «ախորժակի», որպես վկայություն իրենց օտար վարդապետության համար, սակայն այդպես վարվողներն էլ ավելի են խայտառակվում հենց իրենց իսկ մատնանշած խոսքերով, քանի որ բացահայտորեն երեւում է, որ սրբերի խոսքերն այն նշանակությունը չունեն, որով [քաղկեդոնականները] մեկնաբանում են՝ իրենց ցանկություններին հարմարացնելով։ [Նմանատիպ խոսքերից է] Քրիստոսի այն միտքը, թե «Ինչ որ առնում է Ինձանից, կհայտնի ձեզ» (Հովհ. ԺԶ. 15)։ Արդ, եթե այս «առնում է» (առնուցու) բառը հասկանում են «բխել» իմաստով, ապա թող գիտենան, որ, ահավասիկ, երբ Քրիստոս ասում է «առնում է Ինձանից», նկատի ունի՝ «Իմ Հորի՛ց» եւ ոչ թե անմիջապես Իրենից։ Սակայն եթե ուշադրություն դարձնենք խոսքի իմաստին, ապա [կտեսնենք], որ ոչ թե Սուրբ Հոգու բխման մասին է խոսում, այլ այն իմաստության ու մեծամեծ զորության, որը Սուրբ Հոգին պիտի պատմեր եւ տար առաքյալներին։ Իսկ Հոր իմաստությունն ու զորությունն Ինքը՝ Քրիստոս է՝ համաձայն Պողոս առաքյալի [խոսքի], թե «Քրիստոս է Աստծու զորությունն ու Աստծու իմաստությունը» (հմմտ. Ա. Կորնթ. Ա. 30)։ Քրիստոս Ինքը նույնպես մեկնաբանում է Իր այս խոսքը՝ ասելով, թե «ինչ որ Հայրն ունի, Իմն է. դրա համար ձեզ ասացի, թե ինչ որ առնում է Ինձանից, կհայտնի ձեզ» (Հովհ. ԺԶ. 15)։ Որովհետեւ Սուրբ Հոգին, ըստ առանձնավորական բխման եւ ելման, միայն Հորի՛ց է բխում եւ ելնում՝ համաձայն Քրիստոսի անսուտ խոսքի, թե «Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից...» (Հովհ. ԺԷ. 26)։ Իսկ ահա, ըստ ներգործությունների ու շնորհաբաշխության, Հորից եւ Որդուց է «ելնում», «առաքվում» ու «տրվում»՝ Հոր եւ Որդու հետ համակամության ու համաբնույթ լինելու շնորհիվ։ Եւ եթե սուրբ հայրապետներն ու նախնի երանելիները որոշ տեղերում գրել եւ ասել են, որ Սուրբ Հոգին Նրանց (Հոր եւ Որդու) էությունից է, ապա պետք չէ դա [քաղկեդոնիկների նման] մեկնել եւ ասել, թե [այդ սուրբ հայրերն էլ են] Հորից եւ Որդուց «բխած» դավանում, քանի որ դա բոլորովին թյուր մեկնություն է, որովհետեւ այդ երանելիները, որոնք այդպես են ասել, այն միտքը չեն ունեցել, թե Սուրբ Հոգին բխում է Հոր եւ Որդու էությունից (ինչը որ մեծ հերձված է), այլ ընդդեմ արիոսականների ու մակեդոնականների ասել են, որ Սուրբ Հոգին օտար ու խորթ չէ Հոր եւ Որդու էությանը, այլ Նրանց էությունից է, այսինքն՝ էակից ու համագոյակից է Հորը եւ Որդուն ու Նրանց հետ [կազմում է] մեկ էություն եւ գոյություն։ Ահա թե ինչու նաեւ Հավատամքի վերջում կանոնադրեցին՝ «իսկ

ովքեր ասում են, թե կար ժամանակ, որ չկար Որդին կամ Սուրբ Հոգին, կամ թե՝ այլ էությունից կամ գոյությունից են, այդպիսիներին նզովում է սուրբ Եկեղեցին»։ Որովհետեւ Եռանձնյա Սուրբ Երրորդության էությունը մեկ է, միանգամայն անբաժանելի եւ անբազմանալի, հետեւաբար չի կարելի ասել ո՛չ ըստ էության «ծնել», ո՛չ «ծնված լինել», ո՛չ «բխեցնել» եւ ո՛չ էլ «բխած լինել»։ Քանի որ եթե էության մասին ասես «ծնել» կամ էլ «բխել», դա կնշանակի, որ էությունը բազմացրիր կամ զանազանեցիր, որը մեծ հերձված է ու դեմ է ճշմարիտ հավատին, որովհետեւ ճշմարիտ հավատը հավատում է Սուրբ Երրորդությանը որպես մի էություն, մի Բնություն, մի Աստվածություն եւ այլն։ Իսկ այդ «ծնունդ տալը» եւ «ծնված լինելը», «բխեցնելը» կամ «բխած լինելը» ըստ Անձերի է ասվում, որով [Երրորդության Երեք Անձերը] բաժանվում ու բազմանում են, քանի որ Հոր Անձը ծնում է Որդու Անձը եւ բխում է Սուրբ Հոգու Անձը։ Այդ իսկ պատճառով կոչվում են «Երեք Անձեր՝ զանազանված ու բաժանված ըստ Անձերի եւ ըստ Դեմքերի», իսկ ահա ըստ էության ու ըստ Բնության ո՛չ բաժանվում են եւ ո՛չ բազմանում, ուստի եւ կոչվում են միաբուն, միագո ու մեկ Աստված՝ անբաժանելի եւ անայլայլելի։

Ուրեմն նախնի երանելիները, ասելով, որ Սուրբ Հոգին Նրանց (Հոր եւ Որդու) էությունից է, նկատի չեն ունեցել «բխումը», իբրեւ թե՝ Նրանցից է բխել, այլ նկատի են ունեցել [Հորը եւ Որդուն] էակից լինելը, այսինքն՝ Նրանց էությունից եւ Նրանց համագոյակից ու ոչ թե Նրանցից, այսինքն՝ Հորից եւ Որդուց խորթ լինելը։ Ինչպես որ նաեւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչն է հաճախակի այդ խոսքերը գործածում մեր նշած այս վերջին մտքի համաձայն։ Ըստ դրա են խոսում նաեւ մյուս երանելիները։ Իսկ այժմ տե՛ս, թե ինչ են ասում Սուրբ Հոգու առանձնավորական բխման մասին։ Մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչն իր «Հաճախապատում» գրքի առաջին գլխում ասում է. «Ամենասուրբ Երրորդության բնությունն ու գոյությունը մեկ է, եւ Հայրը որպես սկիզբ ու պատճառ է Որդու եւ Սուրբ Հոգու համար։ Հայր է Որդու համար, եւ բխում՝ Սուրբ Հոգու համար։ Ծննդյամբ պատճառ է Որդու համար, եւ բխմամբ՝ Սուրբ Հոգու համար»։ Եւ հինգերորդ գլխում ասում է. «Հայրը Միածին Որդու Հայրն է եւ Սուրբ Հոգին բխեցնողը՝ նրանց էությունների պատճառը՝ նույն Բնությունից»։ Եւ շատ այլ այսպիսի [օրինակներ]։ Համաձայն այս նույն մտքի են խոսում նաեւ մյուս բոլոր նախնի եւ սուրբ հայրապետներն ու վարդապետները, որոնք ծանոթ են ընթերցողներին։

Այս վերոհիշյալ օրինակի նմանողությամբ [քաղկեդոնականները] վերցնում են նաեւ սուրբ Գրիգոր Նարեկացու որոշ խոսքեր՝ որպես զորեղ վկայություն համարելով իրենց «նորաբանության» համար։ Եւ սրա պատճառն այն է, որ թեպետ երանելի [սուրբ Գրիգոր Նարեկացու] հավատը եւ դավանությունը որպես արեգակ հայտնապես փայլում էին իր գրություններում, սակայն այդ [գրությունների] շարադրանքը խրթին եւ մտքի համար դժվարահաս է, իսկ ահա ի հայտ եկած որոշ անհմուտ գրչագիրները եւ վարձկան դպիրները որոշ տեղիների խրթնությունը վերածեցին «մթության», եւ [այդ որոշ տեղիներում] հեղինակի միտքը գրեթե իսպառ անհետացավ։ Իսկ ահա մթնասերներն էլ (նկատի ունի քաղկեդոնականներին) այդպիսի մթնագույն վայրերով են շրջում՝ ջանալով դուրս պրծնել իրենց մոլորությունից, մինչդեռ էլ ավելի են խրվում այդ մոլորության մեջ։ Այսպիսով՝ երանելի [սուրբ Գրիգոր Նարեկացին] իր Աղոթագրքում՝ ԽԸ. գլխի վերջաբանում (որում դիմում է Հորը), որը թե ինքը՝ [Նարեկացին], ինչ ձեւով է շարադրել, որեւէ մեկին հայտնի չէ, մինչդեռ արտագրող գրիչներն ու դպիրները փոխանցում են [հետեւյալը]. «Եւ Քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ, ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց, Սուրբ Երրորդութեանդ...» *(աշխարհաբար — «Եւ Քեզ՝ սկզբիդ միակ եւ անսկզբիդ՝ սկզբնավորիդ եւ սկիզբներից սկզբնավորվածիդ հետ՝ Սուրբ Երրորդությանդ...».— ծ. թ.)։ Հակառակորդները (նկատի ունի քաղկեդոնականներին.— ծ. թ.), այս խոսքերը վերցնելով, մեկնում են այնպես, թե առաջին երկու [հատկորոշիչները], այսինքն՝* «սկզբիդ միակ եւ անսկզբիդ» *[բառերը], ասվում են Հոր մասին, երրորդը, այսինքն՝* «սկզբնավորիդ [հետ]» *[խոսքը], վերաբերում է Որդուն, իսկ չորրորդը՝* «սկզբնավորվածիդ» *[բնութագրիչը], Հոգու մասին է ասում, Որը «սկիզբներից», այսինքն՝ Հորից եւ Որդուց է սկզբնավորված։ Սակայն եթե երանելու դիտավորությունը դա լիներ, պետք էր գրել «եւ սկզբնաւորելոյդ ի սկզբանց» եւ ո՛չ թե՝ «սկզբնաւորիդ սկզբանց», որը ոչ հմուտ եւ անհամ շարադրանք է՝ անվայել երանելու իմաստությանը։ Քանի որ «սկզբնաւորիդ սկզբանց» [արտահայտությունը] մի անիմաստ ձայնարկություն է, որը պարզապես ոչինչ չի նշանակում։ Եւ եթե ասեն, թե երանելու դիտավորությունն այն է եղել, որ Հոգին ցույց տա որպես երկու սկիզբներից, այսինքն՝ Հորից եւ Որդուց սկզբնավորված, ապա պիտի [հակադարձենք]՝ ասելով, որ անվարժ գրչագիրների արտագրությունն է խեղաթյուրել [Նարեկացու միտքը], այլապես ինչպե՞ս է, որ նույն գրքի ԺԳ. գլխում անմիջապես Հորն*

ուղղելով իր խոսքը՝ [երանելին] ասում է. «Հայրդ բարի ողորմութեանդ շնորհի... Ընդ քեզ եւ Որդիդ քո՝ իբրեւ զքեզ... Եւ Հոգիդ Սուրբ ճշմարտութեան, Բղխեալ առ ի քէն անսպառութեամբ» (աշխարհաբար — «Ողորմությունդ շնորհող բարի՛ Հայր... Քեզ հետ եւ Քո Որդին՝ ինչպես Դու... Եւ ճշմարտության Սուրբ Հոգին՝ բխելով Քեզնից անսպառորեն».— ծ. թ.)։

Եւ իր մի գլխում, որը կոչում է «ուղիղ հավատի մասին», բարձրագոչ ասում է. «Սա՛ է ճշմարիտ հավատի դավանությունը. հավատալ Հայր Աստծուն, Որին որեւէ մեկը չի ստեղծել, եւ ոչ էլ Ինքն է Իրեն արարել, այլ Ինքն է եղել ամենքի՝ Իրեն համագոյակիցների, այսինքն՝ Որդու եւ Հոգու սկիզբն ու պատճառը ծննդյամբ եւ բխմամբ, եւ արարվածներիս [սկիզբն ու պատճառը]՝ արարչությամբ»։ [Քաղկեդոնականներն] ի՞նչ են պատասխանում սրան, մի՞թե կհամարձակվեն ասել, թե երանելին ինքն իրեն հակասելով է խոսում. մենք, քավ լիցի, նման բան անկարող ենք կարծել, քանի որ մենք անտարակույս գիտենք, որ այս երանելին Սուրբ Հոգուն դավանում է միայն Հորի՛ց բխած։ Հետեւաբար եւ այսպիսով՝ այս իսկ դիտավորությամբ է, որ երանելին ասում է, թե՝ «Քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ, ընդ սկզբանդ եւ սկզբնատրիդ սկզբանց, Սուրբ Երրորդութեանդ եւ միոյ Աստուածութեանդ փառք...» *(աշխարհաբար — «Քեզ՝ սկզբիդ միակ եւ անսկզբիդ՝ սկզբնավորիդ եւ սկիզբներից սկզբնավորվածիդ հետ՝ Սուրբ Երրորդության եւ մեկ Աստվածության փառք...».— ծ. թ.)։ Այդ միեւնույն դիտավորությամբ է նաեւ երեսուներկուերորդ գլխի վերջում ասում, թե* «Քեզ միայնոյ պատճառիդ (որ Հայրն է) եւ միոյդ ի միոյ պատճառէ (որ Որդին է) եւ ունողիդ զպատճառ միոյ (որ Սուրբ Հոգին է)», *որը միայն մեկ պատճառ ունի բխմամբ՝ Հորից, եւ ո՛չ թե երկու «պատճառ» (աշխարհաբար — «Քեզ՝ պատճառիդ միակ, եւ մյուսիդ՝ միակ պատճառից, եւ Քեզ, որ դարձյալ պատճառն ես մեկի...».— ծ. թ.)։ Սա՛ է երանելու միտումը, ինչպես որ ասացինք։ Իսկ եթե այսպես ընդունենք, որեւէ այլ նշանակություն չենք կարող տալ այս շարադրանքին, եթե նույնիսկ հազարավոր իմաստներ «կարկատեն» սրան։*

Խոսքս երկարելու պատճառն այն է, որ գիտենանք, թե առաջին, նախնի սրբերից ոչ ոք Սուրբ Հոգուն Հորից եւ Որդուց բխած չի կոչել, այլ՝ միայն Հորից։ [Այդ սրբերին] հետեւելով՝ ձեր «ընտրյալ» ժողովը նույնպես (նկատի ունի Քաղկեդոնի ժողովը) սահմանեց այդպես խոստովանել, չնայած որ մյուս բոլոր կանոնները, որոնք սահմանել էր, սխալ էին ու հակասում էին նախնի սրբերի կանոններին։ Արդ, դուք, մերժելով ձեր

այդ ժողովի սահմանած [միակ] ճշմարտությունը, որը փոխանցվել էր նախնիներից, մերժեցիք նաեւ այդ ժողովը, ինչպես որ ցույց տվեցինք, ուրեմն ինչո՞ւ եք մեզ ստիպում հետեւել այն ամենին, ինչը որ դուք խոտելի եւ հրաժարելի համարեցիք։ Դուք նախ առաջին երեք սուրբ ժողովները մերժեցիք ու ձեր այդ սուտ ժողովը հաստատեցիք, իսկ հետո նաեւ այդ վերջինը մերժեցիք, ուրեմն ո՞րն եք պահում ու որի՞ն եք հետեւում, ցո՛ւյց տվեք մեզ, որպեսզի մենք էլ հետեւենք։

Եթե դու ցույց չես տալիս այն տեղը, թե որտեղից եք ուսանել, կամ եթե պատասխան չես տալիս [այն հարցին], թե դուք ինչու այդքան հակառակվեցիք այսքան ճշմարտությունների, ե՛ս ձեզ կասեմ ստույգը։ Արդ, դուք ո՛չ Սուրբ Գրքի շավիղն եք [անխոտոր] պահում եւ ո՛չ էլ սուրբ նախնիներին եք հետեւում, այլ ձեր բաժանասիրությունից դրդված՝ մշտապես նորանոր կանոններ եք հաստատում՝ ըստ ձեր կամքի, որպեսզի որեւէ կերպ չնմանվեք սուրբ նախնիներին։ Քանի որ ինչպես ձեր բաժանասիրությունը ձեզ հարկադրեց մեկ Քրիստոսին երկուսի բաժանել՝ ի հակադրություն առաջին սրբերի, այդպես էլ այդ նույն [բաժանասիրությունը] ձեզ «ստիպեց» մեկ Սուրբ Հոգին ճեղքել երկուսի՝ կեսը «Հորից», եւ կեսը «Որդուց» [բխած կոչելով]։ Սակայն դուք այդքանով էլ չբավականացաք, այլ ձեր ձեռքերը երկարեցիք սուրբ Պատարագի խորհրդին եւ նրա միությունն ու անապականությունն այլայլեցիք եւ ապականեցիք՝ այն երկու տարրերով, այսինքն՝ գինով եւ ջրով կատարելով։ Բայց այս խորհուրդն այլայլելով եւ բաժանելով եւս չբավականացաք, այլ «հավելումներ» կատարեցիք նաեւ հանդերձյալ կյանքի մեջ՝ դժոխքը նույնպես երկուսի բաժանելով. մեկը՝ հավիտենական, իսկ մյուսը՝ ժամանակավոր, որը ձեր սուտ քավարանն է՝ ընդդեմ ամբողջ Սուրբ Գրքին, որը քարոզում է, որ հանդերձյալ կյանքում ամեն բան հավիտենական է։ Էլ չեմ ասում ձեր մյուս նորահռչակ կանոնները, որոնք ինչպես եւ երբ կամեցաք ու կամենում եք, սահմանում եք՝ ըստ ձեր ցանկությունների, որոնք դեմ են ու հակասում են առաջին սուրբ նախնիներին եւ առհասարակ դեմ են ողջ Սուրբ Գրքին, ու դա մ՛այն պատճառով, որ հեռացաք նրանցից։

Իսկ եթե հույների դեմ առարկելու լինես, այսպե՛ս կասես. դուք, որ Քաղկեդոնի ժողովը չընդունելու համար մեզ հերձված եք կոչում, արդ, ասացե՛ք մեզ, եթե ձեր այդ ժողովը ճշմարիտ, ընդունելի եւ առաջին երեք սուրբ ժողովների համաձայն էր, ապա ուրեմն ձեր նախնի, սուրբ վարդապետներն իրենց ժամանակին ինչո՞ւ չընդունեցին այդ ժողովը։ Քա-

նի-քանի երեւելի եւ հրաշագործ հայրապետների ու ընտիր վարդապետների հալածեցին, աքսորեցին, չարչարեցին եւ նույնիսկ նահատակեցին Մարկիանոսն ու իր կինը, ինչպես որ հայտնապես ցույց է տալիս նույն այդ ժողովի գործքը։ Միթե դուք՝ ավելի ուշ ասպարեզ եկած մանուկներդ, ավելի իմաստուն գտնվեցիք, քան ձեր նախնիներն էին։ Նրա՜նք ձեզնից ավելի մոտ ու տեղյակ էին նախնիների առաքելական եւ հայրապետական ավանդույթներին, եւ եթե նրանք չգիտեին, դուք որտեղի՞ց ուսանեցիք, ո՞չ արդյոք մեկ ուրիշից, քան Նեստորից ու Լեւոնից։ Իսկ Զենոն եւ Անաստաս թագավորների ժամանակներում՝ Մարկիանոսից հետո, մեկը մյուսի հետեւից ժողովներ գումարելով, թագավորով ու եկեղեցականներով հանդերձ, բազմիցս նզովեցիք նույն այն ժողովը, ինչպես ցույց են տալիս պատմիչները։ Եւ որքա՜ն աղմուկ ու խռովություններ բարձրացան, երկպառակություններ եւ միմյանց դեմ ուղղված նզովքներ հնչեցին ձեր ազգի ու երկրի մեջ այդ անկարգ ժողովի պատճառով Մարկիանոսից մինչեւ Հուստինիանոս, որի օրոք գահ բարձրացավ լեւոնադավ Ագաթոն պապը, որի կեղծավոր հրապուրանքով ոմանք կամավորաբար, ոմանք ակամա մոտավորապես հարյուր տարի անց ընդունեցին այդ ժողովն ու կոչվեցին քաղկեդոնականներ։

Սա ե՛ւս հարցրու հույներին, թե՝ դուք, որ այդ ժողովով միաբանվել էիք լատինների հետ, հետագայում ինչո՞ւ նրանց հետ միաբան չմնացիք մյուս բոլոր հարցերում, որպեսզի այդժամ կարողանայիք մեզ երկուսովդ «իրավացիորեն» մեղադրել։ Ո՞ւր է ձեր միաբանությունը, ո՞ր մեկդ ունեք սկզբնական, բուն ճշմարտությունն ու սուրբ նախնիների ճշմարիտ կանոնները, ցո՛ւյց տվեք մեզ, եւ մենք կհետեւենք։ Իսկ ահա եթե դուք երկուսդ էլ կորցրել եք սուրբ նախնիների ճանապարհը, ինչպես որ ցույց տվեցինք վերեւում, ապա ուրեմն ինչո՞ւ եք մեղադրում մեզ, որ մոլորված չենք, այլ մնացել ու մնում ենք Աստծու ճշմարիտ ճանապարհի վրա։ Ձեր այդ «միաբանությունն» այնքան տեւեց միայն, որ մեկ Քրիստոսին երկուսի բաժանեցիք, ապականեցիք եւ այլայլեցիք ձեր նախնի, սուրբ հայրերի կանոններն ու սահմանումները, Քրիստոսի մեկ եւ միադավան Եկեղեցին բազմաթիվ մասերի բաժանելով՝ ցաքուցրիվ արեցիք, ու միադավան եւ միահավատ սիրով միացած նրա անդամներին պառակտելով՝ բաժանեցիք, օտարացրիք ու թշնամացրիք միմյանց դեմ, եւ ապա միայն դո՛ւք թշնամացաք ու անարգեցիք միմյանց եւ սկսեցիք մեկմեկու նույնպես «հերձված» կոչել։ Արդ, ո՞ւր է ձեր սիրելի ժողովի կանոնն ու ձեր միաբանությունը, ին-

չո՞ւ երկուսդ էլ մերժելով արհամարհեցիք ձեր ժողովի սահմանումները։ Եւ եթե ձեր այդ սիրելի ժողովը ճշմարիտ էր, ուրեմն ինչո՞ւ լատինադավանները մերժեցին այն ու, ընդդեմ նրա կանոնի, Սուրբ Հոգին Հորից եւ Որդուց [բխած] կոչեցին։ Ահավասիկ, այդպես վարվողները քաղկեդոնականներ էին, ուրեմն ինչո՞ւ դուք չհետեւեցիք նրանց։ Քաղկեդոնականներն էին, որ հանդերձյալ [աշխարհում] քավարան հաստատեցին, դուք ինչո՞ւ չեք հետեւում նրանց ու չեք ընդունում այն։ Քաղկեդոնականներն էին, որ սուրբ Խորհուրդը մեկ ջրով էին կատարում, դուք ինչո՞ւ, ընդդեմ նրանց, մեկ ջուրը երկու դարձրիք։ Քաղկեդոնականներն էին, որ սուրբ Պատարագի հացը բաղարջով են պատրաստում՝ ըստ նախնիների ավանդության, ուրեմն դուք ինչո՞ւ եք թթխմոր եւ աղ ավելացնում այդ հացին։

Այդ բոլորը մի կողմ թողնենք եւ միայն սա հարցնենք ձեզ երկուսիդ։ Ահավասիկ, երկուսդ էլ, այսինքն՝ լատինադավանն՛երդ էլ, հունադավանն՛երդ էլ, քաղկեդոնականներ եք եւ Քրիստոսի համար «երկու բնություն» եք ասում, ապա ուրեմն դուք ինչո՞ւ միաբան չեք ու չեք սիրում միմյանց, այլ դեռ մի բան էլ ատում եք իրար ու մեկմեկու «հերձված» եք կոչում։ Դիցուք՝ եթե մենք ձեզ հետ քաղկեդոնական էլ լինեինք (որը, քավ լիցի, չէր կարող տեղի ունենալ), այդժամ մեզ նույնպես «հերձված» կկոչեիք եւ մեզ էլ կատեիք ճիշտ այնպես, ինչպես որ այժմ եք անում։ Սակայն ես կասեմ ճշմարիտը. դուք երկուսդ էլ, ճշմարտության մեկ [ճանապարհից] սկսելով ձեր ընթացքը, հետագայում շեղվեցիք այդ ճանապարհից եւ այդուհետ էլ կանգ չառաք, այլ նորանոր կանոններ եք սահմանում միմյանց դեմ ու մեկմեկու «հերձված» եւ «մոլորված» եք կոչում՝ երկուսդ էլ իրավացի լինելով։ Հետեւապես մեզ համար մեծ հիմարություն կլիներ, որ մեր բուն, ճշմարիտ ճանապարհը թողած՝ ձեզ՝ միմյանց դեմ մարտնչողներիդ հետեւեինք։

Եւ դու, իմ սիրելի ա՛զգ Հայոց, մի՛ կարծիր, թե զուր եմ այս ամենն ասում կամ սուտ մեղադրանքներ եմ հարուցում մեր «եղբայրների» դեմ, որովհետեւ, ահավասիկ, վերեւում ցույց տվեցինք, որ նրանք ո՛չ միայն երեք սուրբ ժողովները մերժեցին, այլ նաեւ իրենց սիրելի ժողովն ուրացան՝ այդ վերոնշյալ ժողովներին հակասող նորանոր կանոններ սահմանելով։ Ահա դարձյալ ձեզ հավաստի ցույց կտամ դա, որպեսզի գիտենաք, որ մշտապես նորանոր կանոններ են սահմանում ո՛չ միայն ընդդեմ սուրբ նախնիների, այլ նաեւ ընդդեմ Քրիստոսի ու Նրա սուրբ առաքյալների։ «Գործք առաքելոց»-ում ասվում է, որ թլփատության պատճառով հրեաներից դարձի եկած հավատացյալները խստորեն վիճում էին անթլփատների, այսինքն՝ հեթանոս հա-

վատացյալների հետ՝ պնդելով, թե՝ քանի դեռ չեք թլփատվել, ձեր հավատը կատարյալ չէ, ասել է թե՝ կատարյալ քրիստոնյա չեք։ Այդ իսկ պատճառով էլ սուրբ առաքյալները, նրանց համոզելով, վճռում են հետեւյալը, թե՝ «եղբայրնե՛ր, պետք չէ խիստ նեղել եւ կարողությունից առավել ծանր բեռներ դնել նորահավատ հեթանոսների վրա, այլ միայն կանոննե՛ր սահմանենք նրանց համար, որպեսզի խուսափեն մեծ եւ ծանրագույն մեղքերից, այսինքն՝ զոհաբերությունից, խեղդամահ արված կենդանիներից, պոռնկությունից եւ արյունից» (տե՛ս Գործք ԺԵ. 19–20)։ Ահավասիկ, սուրբ առաքյալներն այս չորս կետերը, այսինքն՝ կուռքերին զոհ մատուցելը, պոռնկությունը, մարդասպանությունը եւ խեղդամահ արված կենդանիներին ուտելն են հավասարապես մեծ ու գլխավոր մեղքեր համարում, իսկ այժմ, երբ ոմանք խեղդամահ արված ու մեռելոտի կենդանիներ են ուտում՝ որպես բարեպաշտության դրսեւորում, դա ուրիշ կրոններին է հատուկ։

Եւ առավել զարմանալին այն է, որ դպիրներն ու փարիսեցիներն ընտրություն էին կատարում կենդանիների միջից. մաքուրներին ուտում էին, իսկ անսուրբներին խոտելի էին համարում՝ համաձայն աստվածային օրենքների, ըստ որոնց հրեաներն առաջնորդվում են նաեւ այժմ։ Իսկ Քրիստոս էլ Իր յուրայիններին պատգամեց, որ «Եթե ձեր արդարությունն ավելի չլինի, քան օրենսգետներինն ու փարիսեցիներինը, երկնքի արքայություն չեք մտնի» (Մատթ. Ե. 20)։ Իսկ այժմ որոշ քրիստոնյաներ ո՛չ միայն առանց խտրության ուտում են ամեն ինչ՝ գառ եւ մուկ, ձուկ ու օձ եւ ուրիշ գարշելի բաներ, էլ չեմ ասում, որ զազրելի եւ անսուրբ կենդանիներն ու գարշելի սողունները նրանց համար առավել հարգի ու հաճելի են, ուստի եւ այդ «քրիստոնյաներն» ավելի մեծ գնով են ձեռք բերում դրանք, քան մաքուր կենդանիներին կարող էին ձեռք բերել, ու սարսափելին այն է, որ դրանք ճաշակում են պահո՛ց օրերին (չնայած որ նրանց միջից իսպառ անհետացել է «պահք» անունը), եւ այդ ամենի պատճառով էլ նրանք (նկատի ունի այս վերոնշյալ «քրիստոնյաներին»)՝ այդ բոլոր որովայնամոլներն ու մարմնապաշտները, գահավիժում են ցած։

Շարունակելի

Գրաբարից փոխադրությունը՝
ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ